ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՏԱՐԵՑ ՓԱՍՏԱԲԱՆՆ ԱՅՍՕՐ ԴԱՐՁԱՎ 100 ՏԱՐԵԿԱՆ

10.06.2024 15:24

Այսօր լրանում է Հայաստանի Հանրապետության ամենատարեց փաստաբանի՝ Հրաչիկ Գոգինյանի ծննդյան 100-ամյակը: ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանն այցելել են հոբելյարին՝ ծննդյան տոնի առթիվ շնորհավորելու համար:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանն անձամբ իր և Փաստաբանների պալատի անունից շնորհավորել է ավագ գործընկերոջը՝ մաղթելով, որ նա շարունակի վայելել հարազատների, բարեկամների և շրջապատի հարգանքը, սերն ու ուշադրությունը:

Նշենք նաև, որ Հրաչիկ Գոգինյանը Հայրենական պատերազմի վետերան է:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })